

մար, աշխարհի ընդհանուր օրենքին հետ աստիճանական ներդաշնակություն ու հաւասարեցում կը նշանակէ: Այս ընթացքով, երբ անհատ մը իր բանականութեամբ մասնակից կը դառնայ աշխարհի ընդհանուր օրենքին, տեղի կ'ունենայ ներքին կապակցութիւն մը եւ սկզբունքային հաւասարութիւն մը՝ բոլոր մարդոց միջեւ: Ստոյիկներու բարոյագիտութեան վերոյիշեալ գաղափարները, հետագային, օրինակ ծառայեցին եւ մասամբ ընկալուեցան Նաեւ Քրիստոնէութեան կողմէ:

- **Փիլոնի բարոյագիտութիւնը**

Հրեայ աստուածաբան եւ փիլիսոփայ **Փիլոն Ալեքսանդրացիի** փիլիսոփայական ակնարկով, մարդկային հոգին բանտարկուած է մարմնին մէջ եւ մարմնական մահէն ետք, անմահ հոգին նոր կեանքի մը պիտի վերակոչուի: Այս պատկերացումը Փիլոն պիտի առնչէր աստուածաշնչեան «*մեղքի ուսմունքին*»: Փիլոնի համաձայն, մարդիկ ի ծնէ մեղաւոր են, Նոյնիսկ ամենէն առաքինին կը կրէ այդ մեղքը (յուն.՝ hamartía): Փիլոն, Պլատոնի նման կ'անտեսէր երկրային նիւթեղէնութիւնը եւ յունական փիլիսոփայութեան հետեւելով կը նպատակադրէր՝ հոգիի ազատութիւնը:

Հոգիի ազատութեան համար, սակայն, Փիլոն չէր ընտրէր Ստոյիկեան փիլիսոփայութեան ուղին, որ մարդկային «մասնակի լօգոս»ին եւ տիեզերական «ընդհանուր լօգոս»ին վերամիացումն է, որովհետեւ սա Փիլոնի համար անկարելիութիւն մըն է: Փիլոն հրեական ուղին ընտրելով կը ձգտէր աստուածտեսութեան (յուն.՝ theoptia): Հոգիի այս ազատութիւնը տեղի կ'ունենայ տեսակ մը անմարմնացումի միջոցով, երբ հոգին կը յաջողի զուտ ոգեղէն ոլորտի մը մէջ մտնել, ուր կարելի է նման աստուածտեսութիւն մը: Փիլոնի այս աստուածտեսութեան գաղափարը թէեւ խորհրդապաշտութեան (Mysticism) տպաւորութիւն մը կը թողու, սակայն Փիլոն խորհրդապաշտ մը չէր, ընդհակառակը, Փիլոնի համաձայն մարդոց Աստուծոյ հետ խորհրդապաշտական միութիւն մը (լատ.՝ unio mystica) անկարելիութիւն մըն է, նկատի ունենալով իր երկնային բնազանցական աշխարհի ու երկրային նիւթեղէն աշխարհի խիստ բաժանման գաղափարը: Նոյն պատճառով ալ անկարելի է մարդկային «մասնակի լօգոս»ին եւ տիեզերական «ընդհանուր լօգոս»ին վերամիացումը (ինչպէս վերը յիշուեցաւ):

Փիլոնի համաձայն, դէպի Աստուած տանող ճիշդ ուղին բարոյագիտութեան ուղին է, այլ խօսքով՝ առաքինի կենցաղը: Այստեղ, Փիլոն կրնար միայն Մովսիսական օրենքներն ու պատուիրանները նկատի ունենալ, սակայն ան որպէս գերագոյն նպատակ կը շեշտէ Նաեւ Ստոյիկեան օրինակելի անտարբերութիւնը, Նոյնիսկ՝ անզգայութիւնը (յուն.՝ apátheia), որու միջոցով կարելի է կիրքը զսպել եւ տառապանքը մեղմել: Ստոյիկներու նման մարդ պէտք է ապրի առաքինի ու պարզ կեանքով մը, որ առնչուած է ընդհանուր մարդասիրութեան (յուն.՝ philanthrôpía): Մարդը սակայն, լոկ իր անձնական ուժով չի կրնար առաքինի կեանք մը ունենալ: Աստուած առաքինութիւնները կը գետե-